ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԵԱՆԵՐԻ ՈՂՋԱԿԻԶՈՒՄԸ ԱՆԺԽՏԵԼԻ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՆ. ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԽՏՄԱՆ ՓՈՐՁԵՐ

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2000 թվականի ապրիլի 24-ին լրացավ Հայոց ցեղասպանության 85-ամյակը: Այդ նույն օրը Երուսաղեմում հայ համայնքի առջև հայտարարությամբ հանդես եկավ Իսրայելի կրթության նախարար Յոսի Սարիդը: Դիմելով հայ ունկնդիրներին նա ասաց. «Հայկական համայնքի անդամներ, ձեր հիշատակի օրվա առիթով, երբ հավաքված նշում եք ձեր ցեղասպանության 85-ամյակը, միանում եմ ձեզ որպես մարդ, հրեա, իսրայելցի և որպես Իսրայելի պետության կրթության նախարար:

Երկար տարիներ, շատ երկար տարիներ դուք մենակ եք եղել ձեր հիշատակի օրը: Ես գիտակցում եմ ուրիշ իսրայելցիների հետ իմ այստեղ գտնվելու հատուկ նշանակությունը ձեզ համար: Այսօր, գուցե առաջին անգամ, դուք նվազ միայնակ եք զգում ձեզ:

Հայկական հիշատակի օրը պետք է դառնա բոլորիս համար խորհրդածությունների և ինքնաքննադատական վերլուծությունների օր: Հոգեկանի որոնման օր: Այս օրը մենք՝ հրեաներս, որպես Շոայի[1] զոհեր, պետք է պարզենք մեր վերաբերմունքը ուրիշների ցավերի հանդեպ: 1915-ին հայերի դեմ թուրքերի իրագործած կոտորածն արդի ժամանակների ամենասարսափելի գործողություններից մեկն էր: Այդ ժամանակների Թուրքիայում Ամերիկայի հրեա դեսպան Հենրի Մորգենթաուն այդ կոտորածները նկարագրել է որպես «արդի պատմության ամենամեծ ոճիրը»:

Ամենաշատ ցնցված մի անձնավորություն, որի ստեղծագործությունը, իր հերթին, շատերին ցնցեց, Պրահայում ծնված հրեա հեղինակ Ֆրանց Վերֆելն էր՝ իր «Մուսա լեռան 40 օրերը» գլուխգործոց վեպով. գիրքը, որը 1933-ին գերմաներեն լույս տեսավ, ցնցեց միլիոնավոր մարդկանց: Այդ ժամանակ Ադոլֆ Հիտլերն էր իշխանության ղեկին: «Մուսա լեռան 40 օրերը» կրակների մեջ նետվեց այլ արգելված գործերի հետ: Գիրքն եբրայերեն թարգմանվեց 1934-ին և Էրեց Յիզրայելում մեծ տպավորություն գործեց բազմաթիվ երիտասարդների, այդ թվում նաև ինձ վրա: Ինձ և իմ հասակակիցների համար «... 40 օրերը» նպաստեց մեր քնավորության կազմավորմանն ու աշխարհընկալման ձևավորմանը:

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂԹՈՂՈՒՄՆԵՐ

Այսօր Իսրայելում քիչ թվով երիտասարդներ են լսել

Մուսա լեռան մասին, և շատ քչերը գիտեն Հայոց ցեղասպանության մասին: Գիտեմ, թե աշխարհի հայության համար ինչ կարևորություն ունեն հրեաների կեցվածքն ու, հատկապես, Իսրայել պետության դիրքորոշումը ձեր ցեղասպանության հանդեպ: Որպես Իսրայել պետության կրթության նախարար անելու եմ կարելիս, որպեսզի այդ կոթողային աշխատանքը՝ «Մուսա լեռան 40 օրերը», վերստին մատչելի դառնա մեր երեխաներին: Ես անելու եմ ամեն ինչ, որպեսզի իսրայելցի երեխաները սովորեն և իմանան Հայոց ցեղասպանության մասին:

Մենք՝ հրեաներս, որպես մահաբեր ատելության գլխավոր զոհեր, կրկնակի պարտավոր ենք զգայուն լինել և ճանաչել մյուս զոհերին: Ով անտարբեր է դրա նկատմամբ, ով անտեսում է դա, ով հաշվարկներով է շարժվում կամ ով լուռ է մնում, միշտ էլ նպաստում է հանցագործությունն ի կատար ածողին և ոչ թե զոհին:

Ցանկանում եմ, որ այս վսեմ ուղերձը հասնի մեր ուսանողությանը՝ ընդգրկվելով մեր դպրոցների պատմության նոր ծրագրում, որն այժմ մշակվում է: Կուզենայի այնտեղ տեսնել մի առանձին գլուխ՝ նվիրված ցեղասպանությանը, այդ անմարդկային դաժանությանը: Հայկական ցեղասպանությունը պետք է իր արժանի տեղը զբաղեցնի այդ ծրագրում, որը պատշաճն է հատուցում ձեզանից յուրաքանչյուրի անձնական և, հավանաբար, նաև ազգային հիշողությանը, ձեր ազգի բոլոր անդամների հիշողությանը: Սա մեր պարտավորությունն է հանդեպ ձեզ և նաև՝ հանդեպ մեզ»:[2]

Նույն թվականի մայիսի 12-ին «Ջերուսալեմ փոստ» թերթում լույս տեսավ Լեոնա Էրեն Ֆրուխտի «Ողբերգությունն այլևս կուլիսների ետևում չէ» խորագիրը կրող հոդվածը:[3] Ինչպես նշում է հոդվածագիրը, նախարարի ելույթն ու ծրագիրը կտրուկ շրջադարձ էր Հայոց ցեղասպանության հանդեպ Իսրայելի ավանդական մոտեցման մեջ, որը, գլխավորապես, թուրքերի աղմկարար առարկությունների հետևանք էր:

Իսրայելում տարիներ շարունակ և այժմ էլ գերիշխում է թուրքական դիրքորոշումը, ըստ որի՝ Թուրքիայում ցեղասպանություն տեղի չի ունեցել: Ի հետևանք այս դիրքորոշման Իսրայելի կառավարության կողմից մշտապես ճնշվել է օսմանյան պետության այդ սև էջերի արծարծումը: Փաստորեն Իսրայելի կառավարության՝ Թուրքիայի հետ սերտ կապեր պահպանելու մտահոգությունը կառավարությանը մղել է խոչընդոտելու Հայոց ցեղասպանության հարցի շուրջ գիտաժողովների անցկացումը, այդ մասին կրթական ծրագրերում հիշատակումը, հեռուստատեսային հեռարձակումները: Իսրայելի «Հեռարձակումների ղեկավար մարմինը» (IBA) քանիցս արգելել է Հայկական ցեղասպանությանն առնչվող ծրագրված հաղորդումների հեռարձակումը, որոնց թվում՝ անգլիական «Անցում դեպի Արարատ» վավերագրական և Երուսաղեմի հին քաղամասում ապրող հայերի մասին պատմող ֆիլմերի ցուցադրումները:

Ներկայումս Շինուի կուսակցության առաջնորդ և Կնեսետի անդամ Յոսեֆ (Թոմի) Լապիդը խոստովանել է, որ որպես IBA-ի ընդհանուր տնօրեն, ինքն, այդ ժամանակվա արտգործնախարար Դեյվիդ Քիմխեի ճնշման ներքո, արգելել է հայերի մասին վավերագրական մի ֆիլմի ցուցադրումը: Քիմխեն պատճառաբանել է, որ Անկարային բարկացնելու դեպքում չի հաջողվի կազմակերպել Սիրիայի հրեաների փախուստը Թուրքիայի տարածքով:

Հատկանշական է, որ 1989-ից սկսած, Վաշինգտոնում Իսրայելի դեսպանատունն ակտիվորեն խոչընդոտել է Հայոց ցեղասպանության հիշատակման օգտին ակնկալվող կոնգրեսականների առաջարկություններին:

Իսրայելի պաշտոնական քաղաքականությունը նույնպես, թեև լռելյայն, պաշտոնական այրերին հեռու է պահել ցեղասպանության հիշատակման միջոցառումներին մասնակցելուց: 1995-ին նախարար Յաիր Յաբանից հետո Մարիդը երկրորդ բարձրաստիճան անձնավորությունն էր, որ ներկա գտնվեց նման միջոցառման: Նրա հայտարարությունը մեծ աղմուկ բարձրացրեց Թուրքիայում, որին Իսրայելի արտգործնախարարությունը պատասխանեց. «Յավում ենք, որ Մարիդը նման զգայուն մի թեմայի շուրջ որոշում է ընդունել առանց նախօրոք խորհրդակցելու մեզ հետ»:

Իսրայելի նման դիրքորոշումը հասկանալի է: Բայց այդ քաղաքականությունն ունի նաև իր բացասական կողմը. Թուրքիայի կողմնակից լինելով, Իսրայելը, փաստորեն, գաղտնի համաձայնության է գալիս ցեղասպանությունը ժխտող մի երկրի հետ:

«Այո, այստեղ՝ Իսրայելում, Հայկական ցեղասպանության թեման մոռացության մատնելու միտում է եղել, և որոշ իսրայելցիներ պաշտպանում են այդ ժխտողական դիրքորոշումը», նշել է Հոլոքոսթի ճանաչված մասնագետ ու Հոլոքոսթի զոհերի և հերոսների հիշատակության ղեկավար մարմնի՝ «Յադ Վաշեմի» տնօրեն պրոֆ. Եհուդա Բաուերը, որը ողջունել է Մարիդի որոշումը:

«Մեզանում մեղք է համարվել այլ ժողովուրդների ցեղասպանության մասին խոսելը: Դա սրբապղծություն էր: Քեզ համարում էին դավաճան: Նման դիրքորոշումը տհաստության տխուր շրջան եմ համարում և մեր էթնիկական նորմերին անհավատարմություն, - ասել է Բաուերը, եզրակացնելով, - ընդհակառակը, որպես հրեաներ և որպես մարդկային էակներ, մենք պարտավոր ենք առավել խորը կարեկցել այլ ժողովուրդների ցեղասպանության զոհերին: Մենք պետք է գիտակցենք, որ դրանով բոլորովին չենք նվազեցնում կամ նսեմացնում մեր Հոլոքոսթի ահավորությունը»:

Մյուս կողմից, «Յադ Վաշեմն» էլ է ողջունել և պաշտպանել Մարիդի հայտարարությունը, նշելով, որ միայն «համեմատության միջոցով կարելի է հաստատել Հոլոքոսթի եզակիությունը»: Ըստ Օրիթ Շիմոնի (Շարոն շրջանի Ռամոթ Հեֆեր դպրոցի ուսուցիչ) ուսանողները, որոնց 1995թ. ցեղասպանություն է դասավանդվում համեմատական ձևով, ըմբռնելով, որ ինչքան հեշտ է մոռացության մատնել ցեղասպանությունը, առավել կարևորում են Հոլոքոսթի մասին անընդհատ խոսելն ու գրելը:

Շիմոնի օգտագործած ուսումնական ծրագիրը, որ 1994թ. մշակել է դոկտոր Յաիր Աուրոն, կոչվում է «Զգայնություն աշխարհի տառապանքի հանդեպ: Ցեղասպանությունը 20-րդ դարում»: Դրանում քննարկվում է ցեղասպանությունն ընդհանրապես: Կրթության նախկին նախարար Ամնոն Ռուբինշտեյնի որոշման հիման վրա պատրաստված այդ ծրագիրը հետագայում մերժվել է կրթության նախարարության հանձնաժողովի կողմից որպես «չհավասարակշռված»: Սակայն ծրագրի կողմնակիցները կասկածում են, որ դրա ետևում թաքնված է թուրքական ճնշումը:

Եթե Մարիդի խոստումի համաձայն Հայոց ցեղասպանությունն ընդգրկվեր ուսումնական ծրագրերում, ապա դասավանդվելու էր որպես ֆակուլտատիվ կուրս՝ մոտ 20 այլ թեմաներով կուրսերի շարքում: Դա

շրջադարձ համարվել չէր կարող, բայց Հայոց ցեղասպանության խնդրում քաղաքականության կտրուկ փոփոխության, մանավանդ, այդ հարցում ազգային տարուն վերացնելու նախապայման կարող էր հանդիսանալ: Ցավոք՝ ճնշումների տակ Սարիդը ստիպված էր հրաժարվել իր նպատակադրումից, և, փաստորեն, իսրայելցի ուսանողների համար Հայոց ցեղասպանությունը մնում է որպես մոռացված պատմություն:

2000թ. մայիսի 26-ին Անկարայում հրապարակվեց «Մնարք» գործակալության հաղորդագրություն այն մասին, որ Թել-Ավիվը չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ինչը վկայում է Թուրքիայի կառավարությանն ուղղված Իսրայելի արտաքին գործերի նախարարության պաշտոնական հայտարարությունը:[4] Իսրայելի արտգործնախարար Դեվիդ Լևին հայտարարել էր, որ 1915-1923թթ. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության հարցը պետք է քննարկեն պատմաբանները, այլ ոչ թե քաղաքական գործիչներն ու դիվանագետները: Իսրայելը պահպանում է իր նախկին քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ, նշել էր Լևին: Իսրայելի արտգործնախարարը հարկ էր համարել հատկապես ընդգծել, որ այդ հարցի առնչությամբ Իսրայելի երկու նախարարների հայտարարությունները ոչ մի կերպ չեն արտացոլում Իսրայելի կառավարության դիրքորոշումը: Լևիի ուղերձը հարկ է գնահատել որպես Թուրքիայի հետ Իսրայելի բարեկամական հարաբերությունների վերականգնմանը նպատակաուղղված քայլ: Այդ հարաբերություններն, ինչպես հայտնի է, սրվել էին Իսրայելի երկու նախարարների այն հայտարարություններից հետո, թե Թուրքիան պետք է ճանաչի Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին էթնիկական հողի վրա իրականացված հայերի զանգվածային սպանությունների փաստը:

Միևնույն ժամանակ, չնայած Թուրքիայի հետ այդ հարցի առնչությամբ ծագած տարաձայնությունները վերջնականապես հարթելու մասին իսրայելական աղբյուրների հավաստացումներին, Թուրքիայի դիվանագիտական գերատեսչությունները շարունակում էին պնդել, որ երկու երկրների հարաբերություններում եղած ճգնաժամը դեռևս վերջնականապես չի հաղթահարվել, և որ Անկարան լրջորեն է ընդունում Հայոց ցեղասպանության հարցը, ընդսմին ավելացնելով, թե ոչ մի կերպ այդ առնչությամբ հայտարարություններ չէին սպասում Իսրայելի նախարարներից, որոնց դատողությունները կարող են վնասել Անկարայի և Թել-Ավիվի փոխհարաբերություններին: Կողմերի կարծիքով, երկու պետությունները երկար ժամանակ կարող էին վայելել իրենց բարեկամական հարաբերությունները քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական ոլորտներում համագործակցության շուրջ մի շարք համաձայնագրեր ստորագրելուց հետո, և Իսրայելի համար այնքան էլ նպատակահարմար չէ ինչ-որ երրորդ կողմի պատճառով փչացնել հարաբերություններն իր համար բոլոր տեսանկյուններից շահավետ գործընկերոջ հետ:

Դեռևս 1996թ. ԱՄՆ-ի նախաձեռնությամբ նախապատրաստվում էր 2000 թվականին Շվեդիայի մայրաքաղաքում հրավիրել հրեաների ցեղասպանությանը՝ Հոլոքոստին նվիրված միջազգային խորհրդաժողով: Խորհրդաժողովի նախապատրաստումը կազմակերպվում էր բարձր մակարդակով: 2000թ. հունվարի 26-28-ը Ստոկհոլմում տեղի ունեցած այդ միջազգային խորհրդաժողովին նախորդեցին 1997թ. դեկտեմբերին Լոնդոնում, 1998թ. դեկտեմբերին Վաշինգտոնում կայացած նախապատրաս-

տական խորհրդակցությունները: Հայաստանի Հանրապետությունը, որին, իբր, դեռևս 1996 թվականին տեղյակ էր պահվել Շվեդիայում հրավիրվող խորհրդաժողովի մասին, անհասկանալի պատճառներով չարձագանքեց և փաստորեն, չապահովեց հանրապետության քաղաքական գործիչների ու, գիտնականների մասնակցությունը: Եվ չնայած Հայաստանի և սփյուռքահայության ներկայացուցիչները չմասնակցեցին Ստոկհոլմի միջազգային խորհրդաժողովին, այնուհանդերձ տարբեր երկրների բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից բարձր ամբիոնից բոլոր ներկաներին պարզ ու հստակ հիշեցվեց Հայոց ցեղասպանության իրողությունը:

Միջազգային խորհրդաժողովին մասնակցած 46 երկրների թվում էր նաև Թուրքիան, որի պատվիրակության ղեկավարն իր գոհունակությունն էր հայտնել հրավիրված երկրների ցանկից Հայաստանը դուրս թողնելու առթիվ և հպարտորեն արձանագրել, որ «դարերի ընթացքում հալածական հրեաներին Թուրքիան ապաստան է տվել»: Սակայն անակնկալը մատուցվեց թուրքերին, երբ Գերմանիայի պետական նախարար դոկտոր Միքայել Նաումանն իր ելույթում հիշեցրեց 1915թ. մայիսի 24-ին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարությունների՝ Հայոց ցեղասպանության առնչությամբ հայտարարության մասին: Պետնախարարը հիշատակել է նաև 1918-1920թթ. Ստամբուլում երիտասարդ թուրքերի դատավարությունը և 1919թ. ապրիլի 10-ի՝ Մեհմեդ Քեմալ բեյի մահապատիժը, դրանք որակելով որպես «մարդկության դեմ կատարած ոճրի» համար կայացրած դատավճիռների, պատմության մեջ առաջին օրինակներ:

Խորհրդաժողովում Հայոց ցեղասպանությանն իրենց ելույթներում անդրադարձան նաև Բուլղարիայի նախագահ Պետեր Ստոյանովը, Հոլանդիայի Ցեղասպանության ուսումնասիրման ծրագրի տնօրեն, դոկտոր Քրիստիան Շյեռերը, Շվեդիայի վարչապետ Գորան Պերսոնը: Խորհրդաժողովը կրկին անգամ վկայեց, որ հետզհետե ավելի շատ երկրներ են Հայոց ցեղասպանությունը համարում մի անուրանալի ոճիր, ոչ միայն հայերի ողբերգություն, այլ մարդկային ընդհանուր պատմության անբաժանելի մի մաս:

1999թ. հոկտեմբերին Մեծ Բրիտանիայի կառավարությունը հրապարակեց մի նախագիծ, որով առաջարկվում էր յուրաքանչյուր տարվա հունվարի 27-ը Մեծ Բրիտանիայում նշել որպես հրեաների «ողջակիզման հիշատակման օր»: Ինչպես հայտնի է, հունվարի 27-ը հիշվում է որպես Աուշվից-Բիրկենաու համակենտրոնացման ճամբարի ազատագրման օր, և բրիտանական կառավարությունը մտադիր էր պարբերաբար հասարակայնությանը տեղեկացնել այդ մասին և, ընդհանրապես, դատապարտել ազգային խտրականության դրսևորումները: Բրիտանական կառավարությունն իր նախագծում առաջարկում էր ձեռնարկել լայնածավալ միջոցառումներ, դրանց մասնակից դարձնելով կառավարության պաշտոնյաներին ու հասարակական գործիչներին, կազմակերպել ցուցահանդեսներ, հրատարակել գիտահանրամատչելի գրականություն:

Քանի որ կառավարական այդ փաստաթուղթը նախատեսում էր առաջարկություններ ստանալ միջոցառումների կազմակերպման կապակցությամբ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտն անհրաժեշտ համարեց նույնպես հանդես գալ առաջարկություններով, որոնք գրավոր ձևով 1999թ. նոյեմբերի 30-ին ներկայացվեցին Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ

քաղավորության արտակարգ և լիազոր դեսպանին: Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի հղած նամակում, մասնավորապես, ասված էր.

«1. Կառավարության կողմից ներկայացված նախագծում հիշատակվում է միայն «ողջակիզում» տերմինը, կապված նացիստներից տուժած զոհերի հիշատակը հավերժացնելու գաղափարի հետ: Մենք առաջարկում ենք որպեսզի հունվարի 27-ը հռչակվի որպես «Ցեղասպանության և ողջակիզման հիշատակման օր», «ողջակիզում» տերմինի հետ զուգակցելով նաև «ցեղասպանություն» տերմինը:

2. Անհնար է անտեսել պատմական այն իրողությունը, որ 20-րդ դարի սկզբին, 1915-1923թթ. ընթացքում Օսմանյան Թուրքիայի տարածքում տեղի ունեցավ ոճրագործություն՝ ուղղված իր բնօրրանում ապրող հայ բնակչության դեմ, որի արդյունքում ոչնչացվեցին 1,5 միլիոն հայ:

Թուրքիայի կառավարող շրջանների կանխամտածված ու իրագործված այդ ոճրագործությունը Նյուրնբերգյան դատավարությունից հետո Միավորված ազգերի կազմակերպության կողմից որակվեց որպես ցեղասպանություն: Այս առումով հունվարի 27-ը կարող է դառնալ ոչ միայն ողջակիզման, այլ նաև ընդհանրապես ցեղասպանության հիշատակման օր:

3. Ներկայումս Անգլիայի հայկական համայնքը, ողջ հայ ժողովրդի հետ միասին, յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ը համարում է Հայոց ցեղասպանության հիշատակի օր և այն նշում է բազմաթիվ միջոցառումների կազմակերպմամբ: Այս առումով կարելի է հունվարի 27-ին, ընդհանուր միջոցառումների շարքում, նախատեսել նաև միջոցառումներ, որտեղ կդատապարտվի Հայոց ցեղասպանությունը:

4. Հայ ժողովրդի ողբերգության ծանր տարիներին Մեծ Բրիտանիայի նշանավոր պետական և քաղաքական գործիչներն իրենց բողոքի ձայնը բարձրացրին ընդդեմ Օսմանյան Թուրքիայի: Բավական է թերթել Լորդերի պալատի նիստերի 1915-1922թթ. արձանագրությունները:

Հայ ժողովուրդը երբեք չի կարող մոռանալ օգնության ձեռք մեկնած անգլիական ժողովրդի լավագույն զավակներին: 1998թ. Երևանում, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կառուցված համալիրում ամփոփվեց լորդ Ջեյմս Բրայսի գերեզմանից (Էդինբուրգ) բերված հողը: Արժանի է հիշատակել, որ միայն 1877-1922թթ. Անգլիայում գործել են հայանպաստ քսան երեք կազմակերպություն և հիմնադրամ:

5. Ողջունելով և ջերմորեն պաշտպանելով Մեծ Բրիտանիայի կառավարության առաջարկությունը, կրկին անգամ կարծում ենք, որ յուրաքանչյուր տարվա հունվարի 27-ի օրվա խորհուրդը պետք է լինի 20-րդ դարի բոլոր ցեղասպանությունների հիշատակումը, որպեսզի համայն մարդկությունը վառ պահի բոլոր այն ժողովուրդների պատմական հիշողությունը, որը պահանջում է 21-րդ դարում ապրել առանց ցեղասպանությունների»:

Ցավոք՝ այդ նամակն անպատասխան մնաց:

2000թ. հունվարի 28-ին լոնդոնյան ամենաազդեցիկ թերթերից մեկը՝ «Դի ինդիպենդենտը», հրապարակեց լրագրող Ռոբերտ Ֆիսքի ուշագրավ, միաժամանակ համարձակ և արևմտյան պետությունների հանդեպ բացահայտ մեղադրականով հոդվածը, նվիրված Հայոց մեծ եղեռնին, որը կրում էր «Հիշիր առաջին ցեղասպանությունը» խորագիրը: Հոդվածի շարժառիթը

քրիստանական կառավարության վերոհիշյալ նախագիծն էր, որն արդեն կյանքի էր կոչվել՝ կառավարության կողմից 2000թ. հունվարի 27-ը հռչակելով հրեաների դեմ նացիստական ցեղասպանության հիշատակի օր:

Հարկ ենք համարում ծավալուն մեջբերումով ընթերցողներին ներկայացնել Ռոբերտ Ֆիսքի հոդվածի կարևոր հատվածները:

«Ո՞վ է հիմա հիշում հայերին», - հարցրեց Հիտլերը եվրոպացի հրեաների ոչնչացումը նախաձեռնելուց անմիջապես առաջ: Շատ քչերը, երևի: Հրեաների դեմ գործադրված նացիստական ցեղասպանության հիշատակի օրվա առթիվ պրն. Բլերի հայտարարության մեջ ոչ մի խոսք չկար 1915 թվին օսմանյան թուրքերի կողմից մեկուկես միլիոն քրիստոնյա հայերի կոտորածի մասին: Աշխարհում առաջին Հոլոքոսթը և հրեաներին ոչնչացնելու Հիտլերի ներշնչման աղբյուրը ամբողջովին անտեսվեց:

Հետաքրքիր է, ինչո՞ւ: Պրն. Բլերը չնշեց այդ մասին: Միացյալ Նահանգների կառավարությունը նախընտրում է մոռանալ հայերի ցեղասպանությունը, մինչդեռ թուրքերը՝ Առաջին համաշխարհային պատերազմի վատթարագույն գազանություններն իրականացրած կայսրության ժառանգորդները, ջանասիրաբար ժխտում են ցեղասպանությունը: Եվ մենք նրանց օգնում ենք այդ հարցում:

Հետաքրքիր է, ո՞վ է որոշում, թե ո՞ր ցեղասպանությունը մենք պետք է հիշենք, որը՝ ոչ: Նացիստների կողմից սպանված վեց միլիոն հրեաները միշտ տեղ պետք է գտնեն մեր պատմության, հիշողության և երկյուղների մեջ: Իսկ հայերը, որոնք Հարավային Թուրքիայի գետերում կոտորվեցին, տասնյակ հազարներով սպանվեցին Հյուսիսային Սիրիայի անապատներում և որոնց կանայք և աղջիկները զանգվածային բռնության ենթարկվեցին և դաշունահարվեցին ժանդարմերիայի և նրանց քուրդ ոստիկանների կողմից, տեղ չունեն մեր պատմության կամ հիշողության մեջ: Թուրքիան մեր բարեկամն է: Թուրքիան մի օր կարող է անդամակցել Եվրամիությանը: Թուրքիան Իսրայելի դաշնակիցն է:

Որոշ երկրներում ցեղասպանության ժխտումը ոճրագործություն է: Ես, իհարկե, խոսում եմ հրեական Հոլոքոստի մասին, որովհետև Հայոց ցեղասպանության ժխտումը ոչ միայն կատարյալ օրինակ է, այլև մեծ բիզնես: Թուրքիային զենք վաճառող ամերիկյան ընկերություններից ոչ մեկը չի քննարկի 1915-ի Հոլոքոսթը: Թուրքական կառավարությունը ֆինանսավորում է օսմանյան ուսումնասիրությունների ամբիոններն ամերիկյան համալսարաններում, որտեղ ամերիկացի գիտնականները զարգացնում են այն սուտ միտքը, թե հայերը պարզապես «քաղաքացիական պատերազմի» զոհերն են եղել, և որ թուրքեր էլ են մահացել 1915-ի քաոսային իրավիճակում: Նրանք երբեք չեն դատապարտել 1915-ի կոտորածները և դա անում են պահպանելու համար իրենց աշխատատեղերը, հավաստելով, որ օգտագործել են օսմանյան արխիվները:

Այո, թուրքերն էլ մահացան այդ օրերին, բայց ո՛չ հայերի չափով: Ցանկացած մարդ, եթե այսօր գրի, թե հրեաները եվրոպական քաղաքացիական պատերազմի զոհերն էին, և որ «գերմանացիները նույնպես մահացան» այդ օրերին, կհամարվի խելագար կամ նեոնացիստ: Բայց եթե դու ժխտես Հայոց ցեղասպանությունը, ոչ ոք նման պիտակ չի կպցնի քեզ:

Վերցնենք, օրինակ, հետևյալ նամակը. «Հայկական Հոլոքոսթի առասպելը ստեղծվեց անմիջապես Առաջին աշխարհամարտից հետո, այն հույսով, որ որպես իրենց տառապանքների փոխհատուցում հայերին տրվի

մի կտոր հող տարանջատվող օսմանյան պետությունում: Այս միտքը առաջ քաշողների գլխավոր նպատակը, ուրեմն, քաղաքական և տարածքային էր»: Այժմ փոխարինենք հայ և հայկական բառերը հրեա և հրեական բառերով: Ո՞վ կարող է գլուխը հեշտությամբ ազատել, գրելով. «Հրեական Հոլոքոսթի առասպելը» հրեաների հնարած միտքն է իրենց «տառապանքների» դիմաց փոխհատուցում ստանալու ակնկալությամբ»: Ո՞վ կհրապարակի նման սուտը: Բայց վերոհիշյալ նամակը հայերի մասին էր և գրված է թուրք դեսպանի կողմից: Աստված մեզ պահապան, այդ նամակը գրել է Իսրայելում թուրք դեսպան Բարլաս Օզեները և ամբողջությամբ հրապարակել է «Ջերուսալեմ փոստ» թերթը: Սակայն մենք՝ եվրոպացիներս, նույնքան ստախոս ենք: Միայն թե մի փոքր ավելի շրջահայաց, գուցե... Պրն. Բլերն այս շաբաթ ասաց, որ քանի նացիստական Հոլոքոսթը վերապրողները «ծերանում են և թվով նվազում, մենք առավել պարտավորված ենք հաջորդ սերունդներին պատմելու, թե ինչ է կատարվել և ինչ կարող է կատարվել նորից»: Բայց, մյուս կողմից, չափազանց քիչ հայ վերապրողներ են մնացել: Ինչո՞ւ նրանց ոչ ոք չհարցրեց իրենց հիշողությունների մասին: Մուսա դաղում և հետո նաև Զմյուռնիայում 1920-ին բրիտանական, ֆրանսիական և ամերիկյան ռազմանավերը փրկեցին Հոլոքոսթից փրկված հայերի մի փոքր հատվածի: Բայց պրն. Բլերն այս շաբաթ լռեց այդ մասին: Իսկ լռությունը համաձայնության նշան է: Ես ամբողջովին կողմ եմ նշելու հիշատակի օրերը: Հատկապես հրեական Հոլոքոսթի օրը, նաև, հատկապես, այլ հոլոքոսթների հիշատակի օրերը: Հայոց հիշատակի օրը նույնպես: Բայց Հիտլերի ուրվականն այս շաբաթ կարող է մի փոքր քմծիծաղել: Ի վերջո, ո՞վ է հիմա հիշում հայերին»:

2000 թվականի դեկտեմբերի 6-ին Մեծ եղեռնի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան այցելեց Իսրայելի արտաքին գործերի փոխնախարար Նավաֆ Մասալահը (ազգությամբ արաբ): Դիտելով թանգարանի ցուցադրությունը, նա պատվավոր այցելուների մատյանում կատարեց հետևյալ գրառումը. «Այն, ինչ-որ մենք այժմ տեսանք, սարսափելի է և ցնցող: Ոչ ոք չի կարող անտարբեր մնալ դեմ առ դեմ կանգնելով դրա առջև: Ես ինձ զգացի հայ ժողովրդի հետ տառապելիս և ցանկանում եմ, որ նա շարունակի ապրել իբրև ուժեղ, անկախ և ազատ ժողովուրդ, որը գոյատևել և կերտել է իր հոյակապ մշակույթը: Հայտնելով մեր անկեղծ ցավակցանքը, մենք կոչ ենք անում աշխարհին, նույնիսկ այսօր, պատշաճ դասեր քաղել անցյալից և ամեն ինչ անել, որ նման բաներ երբեք չկրկնվեն»:[5]

Անհրաժեշտ է նշել, որ 2000 թվականի դեկտեմբերի կեսերից, արդեն ԱՄՆ-ի ճնշմամբ, որակական զգալի տեղաշարժ տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում՝ հօգուտ Թուրքիայի:[6]

ԱՄՆ-ի կոնգրեսի օրակարգից Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը հետաձգելուց հետո, պաշտոնական Վաշինգտոնը ձեռնարկեց մշակել հարցի նկատմամբ նոր դիրքորոշման մարտավարություն, ակտիվ միջամտությամբ փորձելով կանխել մի շարք երկրների խորհրդարաններում այդ ուղղությամբ նախապատրաստված, հավանաբար դրական լուծումներ ստացող հարցի քննարկումները:

Թուրքիայի հետ ռազմական, տնտեսական և քաղաքական համագործակցություն զարգացնող երկրները կտրուկ շրջադարձ կատարեցին: Մեծ Բրիտանիայի լորդերի պալատում, Գերմանիայի և Ավստրիայի խորհրդարաններում օրակարգից հանվեցին Հայոց ցեղասպանության դա-

տապարտման հարցը:

Սովորաբար Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագետներն իրենց առաջնահերթ խնդիրն են համարել այցելել Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին կանգնեցված հուշահամալիրը և դիտել Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրությունը: Քաղաքավարության այդ այցելությունը չկատարեց Հայաստանում Իսրայելի նորընծա դեսպանը և դեսպանատան աշխատակազմը:

2002թ. փետրվարի 8-ին Վրաստանում և Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիկվա Կոհենը Երևանում հայկական հեռուստատեսությամբ իր առաջին ճեպազրույցում, կրկնելով Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսի հանրածանոթ խոսքերը, Հայոց ցեղասպանությունն անվանեց «ողբերգություն, որով պատմաբանները պիտի զբաղվեն», ունկընդիրներին հորդորելով չհամեմատել այն հրեական Հոլոքոսթի (ողջակիզման) հետ:

«Հոլոքոսթը եզակի երևույթ է, քանի որ եղել է միշտ ծրագրված և նպատակ է ունեցել ոչնչացնել ամբողջ ազգը: Այս փուլում չարժե որևէ բան համեմատել Հոլոքոսթի հետ», - ասել է տիկին Կոհենը: Պատահական չէր, որ դեռևս 2001թ. դեկտեմբերի 20-ին Վրաստանում և Հայաստանում Իսրայելի դեսպանության երկրորդ քարտուղար Հարի Քլեյմանը հանդես գալով Երևանում կազմակերպված բրիֆինգում հանդես եկավ սաղրիչ հայտարարությամբ: Հերքելով Հայոց ցեղասպանության փաստը, նա հայտարարեց, թե «Իսրայելը ճանաչում է հայ ժողովրդի կրած տառապանքները, այնուամենայնիվ, կարծում ենք, Հայոց ցեղասպանության հարցի քննարկումն այս փուլում պետք է սկսեն պատմաբանները և ճշտեն, թե հստակ ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ է տեղի ունեցել: Կարծում եմ, այսօրվա դրությամբ դժվար թե օգտակար լինի այս հարցը խառնել քաղաքականությանը: Ավելի լավ է դա մնա որպես կարևոր, բայց ակադեմիական հարց»:[7]

Իսրայելի դեսպանի հայտարարությունն առաջ բերեց հայրենիքում և սփյուռքում բնակվող հայերի արդարացի բողոքը: 2002թ. փետրվարի 15-ին Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությունը դեսպան Ռիկվա Կոհենի հայտարարության կապակցությամբ բողոքի նոտա հղեց Իսրայելի արտգործնախարարությանը: Նոտայում, մասնավորապես, ասվում էր, որ Հայաստանն անընդունելի է համարում Հայոց ցեղասպանության իրողությունը հերքելու կամ նսեմացնելու ցանկացած փորձ՝ ինչ պատճառաբանությամբ էլ դա արվի: Ավելին, Հայաստանը երբեք նպատակ չի ունեցել զուգահեռներ անցկացնել Հայոց ցեղասպանության և հրեական Ողջակիզման միջև, համարելով, որ մարդկության հանդեպ գործած ցանկացած հանցագործություն «եզակի» է՝ իր ուրույն քաղաքական, իրավական, պատմական և բարոյական հետևանքներով:

2002թ. փետրվարի 18-ին Իսրայելի արտգործնախարարությունը Հայաստանի արտգործնախարարությանը տվեց հետևյալ պատասխանը. «Իբրև հրեաներ և իսրայելցիներ՝ մենք ցավում ենք հատկապես 1915-1916 թվականների տեղի ունեցած սպանությունների և դժբախտությունների համար: Մենք հասկանում ենք երկու կողմերի զգացմունքների պոռթկումները. գիտենք, որ եղել են մեծ թվով զոհեր և տեղյակ ենք հայ ժողովրդի կրած մեծ տառապանքին:

Այս թեմայի հետազոտությունը պահանջում է հասարակության լայն խավերի մասնակցությամբ մեծ քննարկում, պատմաբանների երկխո-

սություն, որոնք հիմնված կլինեն փաստերի և վկայությունների վրա»: Ապա Իսրայելի արտգործնախարարությունն իր պատասխանում ընդգծել է, որ Հոլոքոսթը եղել է ծրագրված և եզակի երևույթ մարդկության պատմության մեջ, և որ «Իսրայելը ճանաչում է հայերի ողբերգությունը և հայ ժողովրդի սպանդը, սակայն, այդուհանդերձ, պետք չէ այն համեմատել ցեղասպանության հետ և դա բնավ էլ չի նվազեցնում ողբերգության մեծությունը»:[8] Ի դեպ՝ այդ պատասխանում Իսրայելի արտգործնախարարությունն առանձնահատուկ նշել է Թուրքիայի հետ Իսրայելի ունեցած ջերմ հարաբերությունների փաստը:

«Յնեթ» իսրայելական լրատվական գործակալությունն անմիջապես հանդես եկավ «Իսրայելի դեսպանը մերժել է զուգահեռներ անցկացնել Հայոց ցեղասպանության և հրեաների ցեղասպանության միջև» խորագիրը կրող հաղորդագրությամբ, որը, հիմնականում, Իսրայելի արտգործնախարարությանը հղած Հայաստանի արտգործնախարարության բողոքի նոտայի անդրադարձն էր: Այս հաղորդագրությունից հետո իսրայելական լրատվական գործակալությունը ստացավ միջադեպի կապակցությամբ իրենց կարծիքն արտահայտող երեսուներկու իսրայելցիների նամակներ:[9] Դատելով այդ նամակներից հետաքրքրական է դիտարկել, թե ի՞նչ գիտեն իսրայելցիները Հայոց ցեղասպանության մասին և ինչպիսի՞ն է նրանց վերաբերմունքը խնդրո առարկա հարցի շուրջ Իսրայելի կառավարության քաղաքականության հանդեպ:

Միայն հինգ իսրայելցի են Հայոց ցեղասպանությունը համարում ողբերգություն և սպանդ, բացատրելով, որ դա չի եղել ծրագրված. բացակայել է ցեղասպանության գաղափարախոսությունը, այն հետևանք է հայերի ու թուրքերի միջև եղած հակամարտության: Նրանց կարծիքով, թուրքերն ուժգին ատելություն չեն տածել հայերի նկատմամբ, և Օսմանյան Թուրքիայում ապրել են տասնյակ ժողովուրդներ, որոնց նկատմամբ առհասարակ ռասայական ճնշում չի գործադրվել: Այդ պատճառով էլ նրանք ճանաչում են միայն հրեական ցեղասպանությունը, որը գերմանացիների հարյուրամյա ատելության դրսևորումն էր. «Հայերի սպանդը չի եղել նախապես ծրագրված: Կա միայն մեկ ցեղասպանություն...»:

Մի քանի նամակագիրներ, շեշտելով Հոլոքոստի զոհերի թիվը, քննադատել են երկու ցեղասպանությունների միջև զուգահեռներ անցկացնողներին: Ամերիկայի Միացյալ Նահանգներից մի հրեա գրում է. «Զզվելի է, որ մեր մեծ ցեղասպանությունը շահարկվում է քաղաքական նպատակներով»: Իսրայելցիներից մեկի զայրույթը հասել է ցինիզմի. «Իմ ցեղասպանությունն ավելի մեծ է... Իսկ իմ հայրիկն էլ ավելի ուժեղ է՝ ուղղակի հրետանավոր է: Հիմարներ, կշտացրել եք զզվելու աստիճան» (Խուան):

Հայոց ցեղասպանությունը ժխտելու համար Իսրայելի կառավարությանն ու արտգործնախարար Շիմոն Պերեսին մեղադրել են 22 իսրայելցի: Ահա նրանցից մեկի խոսքը. «Դեսպանը ներկայացնում է Իսրայելի կառավարությանը, հետևաբար բնական է, որ պետք է հիմար խոսքեր ասեր: Իսրայելի բոլոր նախարարներն են հիմարություններ խոսում և ամոթալի արարքներ գործում, իսկ դուք բարեկիրթ դեսպա՞ն եք պահանջում»: Իսկ մի ֆրանսիացի հրեաի՝ Օր Սողոմոնի կարծիքով՝ «Հրեաների համար բարոյական արժեքներ այլևս գոյություն չունեն»:

Կարծիքների մեջ գերիշխող է հետևյալ միտքը. «Իսրայելը ցեղասպանություն ժխտող պետություն է, որը մենաշնորհ է ցանկանում նույնիսկ

ցեղասպանության հարցում՝ Հոլոքոսթը համարելով եզակի երևույթ և այն գործածում որպես զենք» (Օրեն): Իսրայելցիների համոզմամբ, էական չէ ցեղասպանության ծրագրված լինելը, հայերի ցեղասպանության ժխտումը դատապարտելի է. «Պետք է բարձրաձայն գոչել, որ որևէ տարբերություն չկա ցեղասպանությունների միջև, եթե նույնիսկ դա վնասի Թուրքիային՝ կազինոների պետությանը» (անունը չի նշված): «Իսրայելի կառավարությունը նախընտրում է դիվանագիտական սառը հաշվետվությունը, քան պետության պատիվն ու բարոյականությունը»: «Եթե Գերմանիայի դաշնակիցները հանկարծ հայտարարեն, որ Հոլոքոսթ չի եղել, ինչպե՞ս մենք դա կընդունենք» (Տալ):

Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսին ուղղվել են սուր խոսքեր՝ քննադատելով արտգործնախարարության պատասխանը Հայաստանին: «1,5 մլն զոհը ցեղասպանություն է և այն էլ ինչպիսի» (Յաել):

Դիպուկ է իսրայելցիներից մեկի հարցադրումը՝ «Արդյոք թուրքերը մեզ վերաբերվո՞ւմ են նույն հոգածությամբ», նշելով, որ իսրայելա-պաղեստինյան խնդրում թուրքերը պաշտպանում են պաղեստինցիների շահերը և ոչ թե իսրայելցիների, իսկ վերջիններս թուրքերի պաշտպանն են և այն էլ՝ ցեղասպանություն ժխտելու գնով (Տալ):

Հատկանշական է մեկ այլ իսրայելցու՝ Դանիելի նամակն այն մասին, որ Իսրայելին քնավ ձեռնտու չեն դիվանագիտական նման միջադեպերը, և որ. «...չպետք է մոռանալ, թե ով է սպանել հայերին, հիմա մենք հայերի ընկերներն ենք և պարտավոր ենք հարգել նրանց և ոչ թե գործել հօգուտ մեզ: Տարածաշրջանում մենք առանձնապես շատ բարեկամներ չունենք»:

Իսրայելցիների այդ կարծիքներից կարելի է եզրակացնել, որ չափազանց աղքատ են նրանց գիտելիքները Հայոց ցեղասպանության մասին, նրանք աղոտ պատկերացում ունեն Օսմանյան Թուրքիայի որդեգրած հայատյաց և ազգի բնաջնջման ծրագրված քաղաքականության մասին, որը սկսվելով Արևմտյան Հայաստանից տարածվելու էր մինչև Արևելյան Հայաստան: Մյուս կողմից՝ ցավալի է, որ նրանց մեջ կարծիք է ձևավորվել, թե հայերը նպատակ ունեն զուգահեռներ անցկացնելու երկու ցեղասպանությունների միջև, որը ճշմարիտ չէ և, առհասարակ, դեմ է մեր մտածողությանը: Իսկ Իսրայելի արտգործնախարարության դեմ նրանց արտահայտած կարծիքները, ինչ խոսք, հուսաղրող են, քանզի Իսրայելի նոր սերունդը փորձում է ազատվել բացառիկության բարդույթից և պետության պատիվն ու բարոյականությունը բարձր է դասում դիվանագիտական շահամետ հարաբերություններից:

Իսրայելի պահվածքը ոգևորեց առաջին հերթին թուրքերին, որոնք նոր եռանդով փորձում են ժխտել Հայոց ցեղասպանության փաստը: Թուրքական մամուլը լայնորեն արձագանքեց հայ-իսրայելական զարգացումներին: Թուրքական թերթերից շատերն այս կապակցությամբ լուրջ «ճգնաժամ» էին կանխատեսում Հայաստանի և Իսրայելի հարաբերություններում:

Թուրքական «Ռադիկալ» թերթը, մեկնաբանելով Հայաստանի արտգործնախարարության բողոքի նոտան և Իսրայելի արտգործնախարարի այցի հետաձգումը, գտնում է, որ Հայաստանի դիրքորոշումը ցեղասպանության ճանաչման հարցում խիստ կարծրացել է, քանի որ Հայաստանի արձագանքն անցած տարի Անկարայում քրիստոնական դեսպանատան նմանատիպ հայտարարությունների հանդեպ նույնը չէր: Թերթը նշում է, որ

Իսրայելի հասարակական շրջանները հիմնականում զերծ են մնում «հայերի հետ կապված իրադարձությունները որպես ցեղասպանություն որակելուց»: Թերքը հերքականությամբ թվարկում է Հայոց ցեղասպանության իրողությունը մերժելուն ուղղված թուրքական բոլոր «փաստերը», քննադատության ենթարկելով Հայոց ցեղասպանությանը նվիրված Վ. Տատրյանի գիտական աշխատությունները: «Ռադիկալը» ուշադրություն է դարձնում հատկապես այն հանգամանքին, որ հայերը «չեն կոտորվել առանց դիմադրության, այլ 1890թ. ի վեր քաղաքական պայքարի ամենատարբեր միջոցներով փորձել են իրականացնել անկախության իրենց ձգտումներն ու դավաճանել Օսմանյան կայսրության շահերին»:

«Ռադիկալը» հիշատակում է նաև Լոնդոնում կայացած մի կոնֆերանսի մասին, որտեղ զեկուցող Մարկ Լևենին նշել է, թե 1950-2000թթ. տեղի է ունեցել մոտ 50 ցեղասպանություն. դրանց մեջ ընդգրկված են նաև միանգամից մեծ թվով քաղաքացիական անձանց սպանության փաստերը: Նույն մոտեցման դեպքում, ըստ «Ռադիկալի», կարելի է բերել ևս 50 ցեղասպանության օրինակ, որոնք կատարվել են 1900-1950թթ.: Լևենին գտնում է, որ մեկ դարի ընթացքում տեղի ունեցած 100 ցեղասպանություններից առաջինը տեղի է ունեցել դեռ բալկանյան պատերազմների օրոք, թուրքերի դեմ:

Վերջում «Ռադիկալը», անդրադառնալով Հարավսլավիայի նախկին նախագահ Միլոշևիչի դեմ դատավարությանը, նշում է, որ ցեղասպանության մեջ մեղադրանքը վերաբերում է ոչ թե հարավսլավական պետությանը, այլ նրա նախկին ղեկավարներին: «Իրավունքը վաղուց է ցեղասպանության մեջ պետության պատասխանատվությունը մերժում, այնպես որ Հայ դատն այդ առումով զուրկ է որևէ հիմքից», - եզրահանգում է «Ռադիկալը»:[10]

Իսրայելի արտաքին գործերի նախարար Շիմոն Պերեսին հատուկ նամակ է հղել Երուսաղեմի «Հոլոքոսքի և Ցեղասպանության» ինստիտուտի տնօրեն, «Ցեղասպանության հանրագիտարանի» գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Իսրայել Չարնին: Միաժամանակ նա նամակներ է հղել Իսրայելի արտաքին գործերի փոխնախարար Միխայել Մելխիորին և Հայաստանում Իսրայելի դեսպան Ռիկվա Կոհենին: Արտահայտելով Հայոց ցեղասպանությունը ժխտելու նրանց դիրքորոշման վերաբերյալ իր կարծիքն ու մտահոգությունը, նա գրել է. «Իբրև հրեա և իսրայելցի ես խորապես ամաչում եմ Հայոց ցեղասպանությունը ժխտելու ձեր դիրքորոշման համար: Հայոց ցեղասպանության ժխտումը համարժեք է Հոլոքոսքը ժխտելուն»:[11]

Չարնին Իսրայելի արտգործնախարարության ուշադրությունն է հրավիրում 2002 թվականի փետրվարի 28-ին Եվրախորհրդարանի նիստում Հայոց ցեղասպանության ճանաչման մասին երկրորդ որոշման վրա, որոշում, որը ցնցեց Թուրքիայի պատվիրակությանը: Պրոֆեսորը նաև հիշատակում է Հոլոքոսքի 126 մասնագետների՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին 2000թ. հայտարարությունը: Չարնիի համոզմամբ, նույնիսկ Իսրայելի համար ամենադաժան ու ծանր օրերին, երբ կարևոր է հարևան Թուրքիայի աջակցությունը, հրեա ժողովուրդը չի կարող շրջանցել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու հարցը, որը պատմական ու բարոյական խնդիր է բոլոր ազգերի համար:

* * *

Հայերի ցեղասանությունը և հրեաների ողջակիզումն անժխտելի պատմական իրողություն են: Այսօր պատմաբանների երկու հակադիր խմբեր փորձում են մի կողմից՝ ընդհանրություններ գտնել երկու ժողովուրդների ցեղասպանությունների միջև, մյուս կողմից՝ ժխտել իրողությունը: Այս առումով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ այդ հիմնախնդրին, որը շատ հարցերում նոր լույս է սփռում հայ-իսրայելական հարաբերությունների պարզաբանման վրա:

Ի տարբերություն վաղ դարաշրջանների կոտորածների, 20-րդ դարում, երբ իշխող գերազգայնական վերնախավերն օժտված էին չտեսնված մեծ կարողություններով և նրանց տնօրինության տակ էին գտնվում մարդկանց մասսայական ոչնչացման հզոր միջոցներ, ցեղասպանությունների երևույթներն ունեն մի շարք առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները հատկապես դրսևորվում են՝

1. կազմակերպչական յուրահատկությամբ.
2. ծրագրավորմամբ, պլանավորմամբ և ժամանակի ընտրությամբ.
3. բյուրոկրատական արդյունավետությամբ և համապարփակվածությամբ.
4. տեխնոլոգիական կարողությամբ.
5. գաղափարախոսության անհրաժեշտությամբ:

Այս հինգ բնութագրումներն էլ առկա էին և՛ հայերի, և՛ հրեաների ցեղասպանության պարագայում:

Վերոհիշյալ առանձնահատկությունները հիմնականում պետական մեքենայի արդիականացման արդյունք ու հետևանք էին:

Տեխնոլոգիական միջոցներով զինված լինելը ու դրանց օգտագործման լայն հնարավորությունները, գաղափարապես հագեցած կազմակերպական ցանցն ամբողջատիրական այնպիսի միջավայր են ստեղծում, երբ զոհերի համար փրկվելու հույս գրեթե չի մնում: Այս չափանիշները տարբեր ժամանակներում գործեցին և՛ Օսմանյան Թուրքիայում, և՛ նացիստական Գերմանիայում: Երկու ցեղասպանությունների դեպքում էլ կարևորվում էր ժամանակի գործոնը. դրանք իրագործվել են պատերազմի ընթացքում, երբ արտաքին միջամտությունը գրեթե անհնար էր:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից Թուրքիան, դաշնակցելով Գերմանիայի հետ, առաջին հերթին նպատակ էր հետապնդում դրա միջոցով ռազմական, տեխնիկական և տնտեսական օգնություն ձեռք բերել: Գերմանիայի ազդեցությամբ էլ Թուրքիայում ձևավորվեցին իր ժամանակի իշխող վերնախավի գաղափարախոսությունը և քաղաքականությունը: Դրա լավագույն ապացույցն էր թուրք առաջնորդների՝ փաստորեն պանգերմանիզմի կրկնօրինակումը հանդիսացող պանթուրքիզմի գաղափարախոսության որդեգրումը :

Ներկայումս պատմագիտական հետազոտությունների և արխիվային նյութերի ուսումնասիրությունների հիման վրա համոզված կարելի է ասել, որ միայն ու միայն Գերմանիան էր կարող Թուրքիայի վրա ճնշում գործադրել՝ կասեցնելու հայկական կոտորածները, որը սակայն նա գիտակցաբար չարեց: Կես դար չանցած Գերմանիան ինքը սկսեց հրեաների ջարդը: Հայկական և հրեական ցեղասպանությունները որոշակի ընդհանրություններ ունեն, որոնք բխում են Օսմանյան և Գերմանական կայս-

ռությունների սոցիալ-տնտեսական և ռազմա-քաղաքական կացությունից:

1984 թվականին իր հոդվածներից մեկում, որը կրում է «Ցեղասպանություն և հերքում. հայկական փորձ» խորագիրը[12], ամերիկահայ նշանավոր պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանն, անդրադառնալով հայերի և հրեաների ցեղասպանությունների դատապարտման և ճանաչման խնդիրներին, անհրաժեշտ է համարում նշել, որ հետնացիստական Գերմանիան, չնայած ընդունեց նախկին կառավարության մեղավորությունը և ձեռնարկեց զանազան փոխհատուցվող գործողություններ, այնուամենայնիվ չճանաչեց անհերքելի փաստերով հաստատված ոճրի հանդեպ իր մեղավորությունը: Սակայն հայտնի է, որ գերմանական կառավարությունն, իր կամքով, թե ստիպողաբար, հատուցում վճարեց հրեական կոտորածների վերապրողներին, զոհերի ընտանիքներին և Իսրայելի պետությանը: Այն շարունակվում է մինչև այժմ: Բացի այդ՝ հրեաների ողջակիզման պատմությունը տեղ գտավ Գերմանիայի ուսումնական ծրագրերում, գիտականության մեջ, այդ թեման արծարծվում էր հենց Գերմանիայում կայացած բազմաթիվ գիտաժողովներում:

Ինչպես միանգամայն ճիշտ նկատել է Ռ.Հովհաննիսյանը, նույնը չի կարելի ասել հայերի ցեղասպանության մասին, որը ո՛չ բացահայտորեն ընդունվեց և ո՛չ էլ արդարացման ու փոխհատուցման արժանի դարձավ: Ընդհակառակը, հայերի ցեղասպանության քննարկումները խափանող թուրքական կառավարության բոլոր ճիգերն աննախադեպ չափերի հասան: Պատճառը, թուրքական տեսանկյունից, անշուշտ քաղաքական էր, քանի որ դեռևս գոյություն ունի պահանջատիրությամբ հանդես եկող աշխարհով մեկ սփռված հայերի փոխհատուցում ակնկալող մի մեծ հատված:

Հայերի ցեղասպանությունը ճանաչելու, ֆինանսական և, նույնիսկ, տարածքային փոխհատուցում պահանջելու խնդիրները և անցյալում կատարած ոճրագործության քողարկման փորձերի դատապարտումը մեծապես անհանգստացնում է Թուրքիայի կառավարությանը: Քաղաքական այդօրինակ մոտեցումը վկայում է այն արմատական տարբերությունների մասին, որ գոյություն ունեին Առաջին համաշխարհային և Երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ տեղի ունեցած Հայոց Ցեղասպանության և հրեաների ողջակիզման միջև:

Երկու ժողովուրդների ողբերգությունների միջև անհերքելի զուգահեռների և ընդհանրությունների փաստը նկատի ունենալով Թուրքիան ակտիվորեն ձգտում է տարանջատել հայկական և հրեական պրոբլեմները՝ դրանով իսկ սեպ խրելով երկու ժողովուրդների միջև, մեծ համակրանք ցուցաբերելով «ճշմարիտ ջարդի» (ողջակիզման) զոհերի ու վերապրողների հանդեպ, մերժելով հայկական կոտորածների փաստը՝ որպես «դարի մեծագույն կեղծիք»:

Հայտնի է, որ որոշ հակասեմիտական խմբեր ողջակիզման փաստը կասկածի տակ են առել, այնուամենայնիվ, աշխարհը եվրոպական հրեաների ոչնչացումն ընդունում է որպես իրողություն:

Հրեական ողջակիզման ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականները գտնում են, որ անհրաժեշտ է նկատի ունենալ շուրջ տասը պարագա, որոնք, անգամ ձևով, զուգահեռներ են ծնում ողջակիզման և հայկական ցեղասպանության միջև:

1. Ողջակիզումից փրկված հրեաները, որպես գաղթականներ, սփռվեցին ամբողջ աշխարհով մեկ:

ДУБЛЕТ

2. Վերապրողները, չունենալով ինքնուրույն պետականություն կամ կառավարություն, ստիպված էին տարիներ շարունակ պայքարել իրենց ֆիզիկական և տնտեսական գոյությունն ապահովելու, սահմանափակ համայնական միջոցներով դպրոցների և հոգևոր կենտրոնների նոր ցանց ստեղծելու և ազգային կրոնական ժառանգությունը, որքան հնարավոր է, պահպանելու համար:

3. Չկար հրեական անկախ ազգային պետականություն, և դաշնակից պետությունները, վերապրողներին օգնելուց հուսահատված, հրաժարվեցին հրեական հարցից:

4. Հրեական համայնքները զրկված էին ազգային պետականությունից, ղեկավարությունից և խթանիչ գործոններից:

5. Պետականության բացակայության պայմաններում նույնիսկ՝ որոշ միջոցներ հատկացվեցին ողջակիզմանը վերաբերող նյութերի հավաքման և ուսումնասիրության նպատակով հետազոտական ինստիտուտներ և այլ մարմիններ հիմնելու համար:

6. Հյուրընկալող պետությունների վրա ազդեցություն գործելու կամ ողջակիզման հետ առնչվող շարժանկարների, հեռուստատեսային հաղորդումների, ուսուցողական ծրագրերի միջոցով հաջողության հասնելու համար հրեա վերապրողների և գաղթականների թիվը քաղաքական և ֆինանսական ազդեցության ոլորտում բավական փոքր էր ու անբավարար:

7. Վերապրողները, ցեղասպանության հիշողություններով ու անջնջելի մանրամասներով, վերջնականապես հեռացան ասպարեզից. նրանց երեխաներն ու թոռները մասամբ ենթարկվեցին ուծացման և անկարող եղան ճշմարտացիորեն վերարտադրել փրկվածների փորձությունները կամ հերքողներին հակադրվել անձնական վկայություններով:

8. Գերմանական կառավարությունը, արհամարհելով դաշնակից տերությունների կողմից սկզբնապես իրեն պարտադրած հաշտության խիստ պայմանները, կնքեց խաղաղության նոր համաձայնագիր, որը վերապրողների համար, նույնիսկ ցեղասպանության պաշտոնական ճանաչմամբ հանդերձ, բացառում էր որևէ փոխհատուցում: Դրանով իսկ գերմանական կառավարությունը հրաժարվեց նախկինի գործողությունների համար պատասխանատվությունից:

9. Միջազգային հարաբերություններում Գերմանիային վերագրվող աշխարհաքաղաքական, ռազմական և տնտեսական մարտավարության արժեքը բավական մեծ էր, որպեսզի օտարերկրյա կառավարությունները արհամարեին նրա դեմ ազդարարվող հրեական կոչերը: Նրանք նույնիսկ մասնակցում էին ցեղասպանությունը քողարկելու ձեռնարկումներին՝ փորձելով բավարարել Գերմանիայի պահանջները, միաժամանակ նպատակ ունենալով կասեցնել նրա դեմ ուղղված թշնամական հայտարարությունները, որոնք կարող էին վնաս պատճառել Գերմանիայի և դաշնակից պետությունների հարաբերություններին:

10. Գերմանական հարցերով զբաղվող օտարերկրյա ուսանողների, գիտնականների և պաշտոնյաների արդի սերունդը նպատակ ունի Գերմանիան ներկայացնել որպես նոր, առաջադեմ, ժողովրդավար պետություն՝ դրանով իսկ փոքր ի շատե մեղմացնելով Գերմանիայի՝ ենգ ու անարդար դահճի և հրեասպանի համբավը: Նման հանգամանքներում հրեա ժողովուրդը պետք է հանդիպեր նույնպիսի անտարբերության, ինչպիսին վիճակված էր հայերին, որոնք ջանում էին իրենց իրավունքները պաշտպա-

նել ընդդեմ համաշխարհային կարծիքի:[13]

1987 թվականին հրեա աստվածաբան Ֆրանկլին Լիթելն իր «Ողջակիզում և ցեղասպանություն. հիմնական զարգացումը» հոդվածում անդրադառնալով նացիստների կազմակերպած հրեաների ողջակիզման պատմությանը և այն դիտելով որպես մի աննախադեպ իրողություն, գտնում էր, որ այն քրիստոնեական հավատի ճգնաժամի արդյունքն էր:[14]

Ֆ. Լիթելն ուսումնասիրողներից առաջիններից էր, որ կատարելով համեմատական ուսումնասիրություններ, փորձեց ընդհանրություններ և նմանություններ գտնել հրեաների ողջակիզման և հայերի ցեղասպանության միջև: Եթե գերմանական նացիստները հակասեմիտական քաղաքականության հետևանքով 1939-1945 թվականների ընթացքում դաժանորեն ոչնչացրեցին վեց միլիոն հրեա, մեկնաբանում է նա, ապա 1894-1896 թվականներին Աբդուլ Համիդը ոչնչացրեց 300 000 հայ, իսկ երիտասարդ թուրքերն, օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմից, վերացրեցին մեկ միլիոն 600 հազար հայի: Ֆ. Լիթելի եզրահանգումն այն է, որ հրեա ժողովրդի 60 տոկոսը ոչնչացվեց քրիստոնեական աշխարհի ճգնաժամի պատճառով, իսկ Օսմանյան «Սրբազան մահմեդական կայսրության» հոգևորքի հետևանքով վերացավ հայ ժողովրդի 60 տոկոսը:

Անդրադառնալով Հայոց ցեղասպանության կազմակերպման հարցերին, Ֆ. Լիթելը առանձնահատուկ տեղ է հատկացնում գերմանական գործոնին, մատնանշելով գերմանական ռազմական այն գործիչներին, ովքեր երիտթուրքերին մեծապես աջակցեցին ցեղասպանությունն իրագործելու ընթացքում: Գերմանական շտաբի այդ բարձրաստիճան սպաներից շատերը հետագայում խոշոր դեր խաղացին երրորդ Ռայխում: Դրանց շարքում Ֆ. Լիթելը հիշատակում է գեներալ-մայոր Ֆրիդրիխ Բոնսարթ ֆոն Շելենդորֆին, որն Առաջին համաշխարհային պատերազմի վերջում կազմակերպեց երիտթուրքերի յոթ գլխավոր ղեկավարների փախուստը: Այդ տարիներին էր, որ գեներալ-լեյտենանտ Հանս ֆոն Սեքքը մի առիթով ասել էր. «Յուրաքանչյուր ոք, ով քրիստոնեական, զգացմունքային և քաղաքական վերաբերմունք կցուցաբերի հայերի հանդեպ, պատերազմական անհրաժեշտությունից ելնելով, կանհետանա»:[15] Ինչպես հայտնի է նույն գեներալ Սեքքը հետագայում՝ Վայմարի տարիներին, դարձավ գերմանական բանակի վերակառուցման պատասխանատու կազմակերպիչներից մեկը :

Ֆ. Լիթելը հայերի և հրեաների ցեղասպանությունների ընդհանուր մասնակիցներից հիշատակում է գեներալներ Ֆրանց ֆոն Պապենին, Ալֆրեդ Յոդլին, Կարլ Դյոնիցին, Կոնստանտին ֆոն Նեյուրատին:

Ինչպես հայտնի է Հիտլերը քաջատեղյակ էր հայկական ջարդերի պատմությանը և ոգևորված էր այն մտայնությամբ, թե հանցագործությունը արդարացում չի պահանջում: Եվ պատահական չէր, որ արդարացնելով հրեաների և լեհերի ծրագրվող ջարդը՝ 1939 թվականին նա անամոթաբար հայտարարեց. «Ո՞վ է այսօր խոսում հայերի ոչնչացման մասին»: Ցեղասպանության և ողջակիզման ամբողջական պատկերը ներկայացնելու, դասեր քաղելու և այն կանխելու «նախազգուշական համակարգ» ստեղծելու համար Ֆ. Լիթելը մատնանշում է երկու ժողովուրդների ցեղասպանությունների միջև գոյություն ունեցող հետևյալ ընդհանրությունները:

1. Արհամարված և հետապնդվող փոքրամասնության բազմադարյան պատմությունը:

2. Մեծամասնության մեջ իշխող մշակութակրոնական ցածր մակարդակը, որի ազդեցությունը մարդկանց վրա այնքան էլ գործուն չէր, սակայն հանցագործներին ուժ էր ներարկում:
3. Կառավարությունն իբրև գործիք ուներ ուժեղ գաղափարական, քաղաքական շարժում՝ ահաբեկչության ձևով: Այդ շարժման անդամները խստացնում էին ներքին կարգապահությունը և արհամարհական վերաբերմունք ցուցաբերում բարոյական ամեն մի սահմանափակման հանդեպ:
4. Բազմակարծության (պլյուրալիզմի) թույլ ավանդույթներով մի հասարակության առկայությունը, որին հատուկ էր պաշտոնակարգության (հիերարխիայի) և ռազմական ապարատի միաձուլումը, և որն անհանգիստ փոքրամասնությանը «ներքին թշնամի» որակելով, նրան արտաքին թշնամուց ավելի վտանգավոր էր համարում:
5. Պատերազմական իրավիճակը, որը կառավարողներին գործելու անսահմանափակ հնարավորություն էր ընձեռում, իսկ ազգային փոքրամասնություններին դարձնում էր ավելի անօգնական:
6. Ազգային փոքրամասնության անպաշտպան վիճակը, որը հանգեցնում էր դիմադրելու անկարողության:
7. Գաղափարախոսության փիլիսոփայությունը, որն արդարացնում է բռնությունն ու դաժանությունը, երբ դրանք ծառայում են քաղաքական «մեծ» նպատակի իրագործմանը:
8. Պատասխանատվությունից խուսափելու նպատակով բյուրոկրատական ձևերի (խաբեություն, կեղծիք) օգտագործումը :
9. Արհեստավարժ ռազմական ուժերի քաղաքականացումը:
10. Կառավարական մարմինները և ստորաբաժանումները մոլեռանդներով համալրելը:
11. Ջարդերի ծրագրի իրագործումը պրոֆեսիոնալ հանցագործների միջոցով: (Ինչպես հայտնի է Թուրքիայում Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ ստեղծված «Հատուկ կազմակերպության» մեջ մտած ջարդարարական ջոկատները համալրվեցին բանտերից վաղաժամկետ ազատ արձակված հանցագործներով, որոնց առջև որպես հիմնական խնդիր էր դրված «լուծել» Հայկական հարցը: Գերմանիայում, Հիմլերի գլխավորությամբ գործող նացիստական կենտրոնական անվտանգության բաժանմունքի միջոցով, 6000 պրոֆեսիոնալ հանցագործներ բանտերից ազատվեցին և ուղարկվեցին համակենտրոնացման ճամբարներ, մասնակցելու հրեաների ողջակիզմանը):
12. Ավարառության և հափշտակության թողտվությունը՝ զոհերին կողոպտելու միջոցով:
13. Պատերազմական գործողությունների ժամանակ, տարբեր ճակատներում կրած անհաջողություններից հետո, ընդհանուր պարտության մոտալուտ վտանգն ուժեղացրեց կոտորածներն ու նոր թափ հաղորդեց ջարդերին:

Ռիչարդ Հովհաննիսյանը, Ֆ. Լիթելի հոդվածի լույս ընծայումից մեկ տարի անց, իր «Հայերի ցեղասպանությունը» ընդարձակ հոդվածում, կրկին անդրադառնում է հայերի և հրեաների ցեղասպանությունների առանձնահատկություններին և ընդհանրություններին:[16] Ելնելով պատմաբանների և սոցիոլոգների ուսումնասիրությունների տվյալներից, նա ևս զուգահեռներ է անցկացնում երկու ժողովուրդների նկատմամբ իրագործ-

ված ոճրագործությունների միջև, նշելով հետևյալ ընդհանրությունները:

1. Ցեղասպանության իրագործումը խոշոր միջազգային կոնֆլիկտի քողի ներքո՝ նվազագույնի հասցնելով օտարերկրյա միջամտության հնարավորությունը:
2. Միակուռ և այլատյաց հանցախմբի կողմից ծրագրի մտահղացումը:
3. Ռասիզմի և էքսքլուսիվիզմի նպատակներին և արդարացմանն աջակցող գաղափարախոսությունը և այն տարրերի նկատմամբ անհանդուրժողականությունը, որոնք խոչընդոտում էին ուծացմանը կամ չէին նպաստում դրա իրականացմանը:
4. Կուսակցական խիստ կարգապահության և գաղտնապահության առկայությունը:
5. Հատուկ զինված ուժերի ստեղծումը՝ գործողությունների մանրակրկիտ իրականացումն ապահովելու համար:
6. Հասարակության թշնամանքի հրահրումը զոհ հանդիսացող խմբերի նկատմամբ:
7. Թիրախ դարձած խմբերի աներկբա խոցելիությունը, որը, հայերի տարբերակում, ապացուցվում էր դեռևս նախորդ՝ 1894-1896թթ. կոտորածներով:
8. Մեքենայացման և հաղորդակցման առաջավոր միջոցների օգտագործումն՝ աննախադեպ մանրակրկիտ վերահսկողության և կոորդինացման հասնելու նպատակով:
9. Թալանի խրախուսումը, այն չկիրառող անհնազանդ պաշտոնյաներին աշխատանքից վտարելը և պատժելը, ինչպես նաև զոհերին ապաստան տվող անձանց ահաբեկելը:

Անշուշտ հրեաների սպանդի և հայերի ցեղասպանության միջև գոյություն ունեցող ընդհանրությունների կողքին կան նաև մի շարք տարբերություններ: Հիմնականում դրանք պայմանավորված են օսմանյան Թուրքիայում և նացիստական Գերմանիայում առկա հասարակարգերի միջև զարգացման մակարդակների տարբերությամբ:

Կարևոր հանգամանք էր զոհերի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի տարբերությունը: Հրեաները նացիստների կողմից դիտվում էին որպես ցեղային և տնտեսական վտանգ ներկայացնող ազգ: Թուրքերը հայերի մեջ տեսնում էին պոտենցիալ տնտեսական և քաղաքական վտանգ, որը սպառնում էր պանթուրքական պետության ստեղծմանը: Եվ վերջապես՝ նացիստները ստորադաս ազգ էին համարում հրեաներին, իսկ հայերը բնակվում էին օսմանյան տիրապետության տակ գտնվող սեփական հայրենիքում՝ մի տարածքի վրա, որը համարվում էր ժողովրդի կազմավորման բնօրրանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Խոսքը Հոլոքոստի մասին է:

[2] Մեծագույն ցնցումը թուրքերի համար. Իսրայելի կրթության նախարարի հայտարարությունը, «Ազգ», 12 մայիսի 2000թ.:

[3] Ողբերգությունն այլևս կուլիսների ետևում չէ, «Ազգ», 24 մայիսի 2000թ.:

[4] Թել-Ավիվը չի ճանաչի հայոց ցեղասպանությունը, «Ազգ», 27 մայիսի 2000թ.:

[5] Բարսեղյան Լ. Ա. Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000թթ.), Երևան, 2001, էջ 76:

[6] Բարսեղյան Լ. Ա. Ամերիկայի Միացյալ Նահանգները, Հայոց ցեղասպանության դատապարտումը և քուրքական հակազդեցությունը, Երևան, 2001, էջ 21-78:

[7] Հակոբյան Թաքուլ. Հայոց ցեղասպանությունը ժխտելով Իսրայելը Հայաստանում ձևավորում է հակահրեական տրամադրություններ, «Ազգ», 13 փետրվարի, 2002թ.:

[8] Դիվանագիտական միջադեպ. Իսրայելի արտգործնախարարության պատասխանը Հայաստանի նոտային, «Ազգ», 19 փետրվարի 2002թ.:

[9] Արձագանքում են իսրայելցիները, «Ազգ», 22 փետրվարի 2002թ.: Նշված նամակները կարելի է կարդալ www. Ynet.co_il -ում:

[10] Իսրայելի դեսպանի հայտարարություններից հետո քուրքերը նոր եռանդով են փորձում մերժել Հայոց ցեղասպանությունը, «Ազգ», 27 փետրվարի 2002թ.:

[11] Իսրայել Չարնի. Հայոց ցեղասպանությունը ժխտելը համարժեք է Հոլոքոստը ժխտելուն, «Ազգ», 7 մարտի 2002թ.:

[12] Richard Hovannisian. Genocide and Denial: The Armenian Case. Proceedings of the International Conference of the Holocaust and Genocide. 1984, p. 84-99.

[13] Նույն տեղում:

[14] Franklin H.Little. Holocaust and Genocide: The Essential dialectic, "Holocaust and Genocide Studies", vol. 1, 1987, p. 95-104.

[15] Նույն տեղում, էջ 98:

[16] Richard Hovannisian. The Armenian Genocide, "Genocide. A Critical Bibliographie Review", London. 1988.

Резюме

Геноцид армян и Холокост евреев – неоспоримые факты: сходства и попытки отрицания.

Лаврентий Барсегян

Официальная политика Израеля ориентируется на турецкую установку отрицания факта Геноцида армян в Османской Турции в начале века.

Желание сохранения тесных стратегических, экономических отношений с Турцией побуждает официальные структуры Израеля квалифицировать эти события лишь как "трагедию, которой должны заняться историки". Между тем, объективная оценка, данная рядом политических деятелей по фактам целенаправленного истребления армян в Османской Турции дает основание полагать, что определенные круги нового поколения Израеля стараются избавиться от комплекса исключительности и достойную позицию государства ставить выше конъюктурных дипломатических интересов.

Анализируя сходства и различия еврейского Холокоста и армянского Геноцида, в статье еще раз подтверждается необходимость объективного подхода к этой проблеме.

Summary

Armenian Genocide and the Jewish Holocaust are Unrefutable Facts: Similarities and Denial Attempts

Lavrenti Barseghian

The Israel formal policy is generally inclined on to Turkish orientation, trying to eliminate the fact of Genocide of the Armenians by Ottoman Turkey, at the beginning of the 20th century.

As Israel is concerned to keep its strategic and economical connections with Turkey, it is made its formal policy to quality the Armenian

Genocide as such a "Tragedy", which is the subject of only the historical research.

Nevertheless, a number of political thinkers give the above – mentioned Armenian Genocide some true evaluation, which makes possible to suppose that certain circles of Israel's younger generation try to escape "the feeling" of being gentile and prefer the nobler behavior of their state more than its diplomatic, interests.

Analyzing the Jewish Holocaust and the Armenian Genocide the present paper emphasizes the necessity of an objective approach to the problem, once again.